

Հողերը վաճառած մարդուն կը մնայ ապրիլ ծովուն եւ իր ալեկոծութեան մէջ: «Ծով»՝ նաեւ արդարացնելու համար Ատա (կղզի) անունը: Կղզի մը շրջապատուած պէտք է ըլլայ հեղուկով: Ուրեմն Ատափազարը կղզի մըն է, որ կը գտնուի «Մանուի Ծով»ին մէջ, այսինքն՝ շրջապատուած է հեղուկով, եւ այդ հեղուկը ուրիշ բան չէ, եթէ ոչ անմահութեան ջուրը՝ օղին:

Ատափազարցիները կղզեցի ըլլալէ աւելի ծովեցի են, քանզի հաստատուն մարմինի վրայ ապրելէ աւելի՝ տատանած են հեղուկի վրայ:

\*

Հիմա խօսքը Ատափազարցիին է, որ խօսի մեզի ծովուն հրաշքներէն:

-Հինգ հոգիով Մանուին Ծովը մտանք ու յիսուն հոգի եղած՝ դուրս ելանք: Ս. Սարգիսին մտանք ծով ու Բուն Բարեկենդանին դուրս ելանք ծովէն: Սախարիա գետին չափ օղի խմեցինք: Ծովին մէջի բոլոր ձուկերը կերանք ու բոլոր ոստրէները ճաշակեցինք: Ոստրէները դանակով չէինք բանար: Հնարք մը գտած էինք: Կը յօրանջէինք եւ, որովհետեւ յօրանջելը փոխանցիկ է, ոստրէներն ալ մեզի նայելով՝ կը բանային իրենց բերանները, ու մենք առիթէն օգտուելով՝ կը կլլէինք զիրենք: Մեր գաւաթները իրար զարկած ատեն՝ *Մեզարըլի*ին մեռելները իրենց գլուխները հողերէն դուրս կը հանէին ու «անոյշ» կը պոռային, իսկ Հայուհեաց փողոցի յղի կիները մէկ զաւկի տեղ երկուորեակ կը բերէին աշխարհ: Նուազը փոթորիկի պէս կ'որոտար ծովին մէջ: Մեր զուռնային ձայնը Արմաշէն կը լսուի ու Չարխաբան Աստուածամայրը մեր Ս. Լուսաւորիչին այցելութեան կուգայ: Երկուքը մէկ, թեւ թեւի Մանուին Ծովէն ներս մտան: *Տալի*ներուն վրայէն քալելով՝ մեր քովը եկան: Օրհնեցին մեզ ու խնդրեցին, որ չարերը հալածենք աշխարհի վրայէն: Զաշեցինք դանակները ու մէկ հոգինիս տասը եղած դուրս ելանք ծովէն: Յամաք ոտք կոխեցինք չկոխեցինք՝ պատերազմը սկսաւ: Յարձակում, նահանջ, պաշտպանութիւն, խուժում, յաղթանակ: Ուրիշներ ալ խառնուեցան: Ու այսպէս սկսաւ ընդհանուր պատերազմը: Չորս տարի: Դափնիի սով եղաւ: Ատափազարը կորսնցուցինք, սակայն տիրա-